Քաղաքացիական գործ թիվ՝ **ԵԴ2/26840/02/23**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)

նախագահությամբ՝ դատավոր Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆԻ
2023 թվականի սեպտեմբերի 5-ին

Ուսումնասիրելով «ԹՈՒՆԵԼ ՍԱԴ ԱՐԻԱՆԱ» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

1. Ընկերության տնօրենը 2023 թվականի օգոստոսի 21-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ խնդրելով անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքում Ջրվեժում ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 4-րդ արձանագրությունով «ԹՈՒՆԵԼ ՍԱԴ ԱՐԻԱՆԱ» ՓԲ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

Հայցադիմումը 2023 թվականի օգոստոսի 21-ին մակագրվել է Դատարանի դատավոր Մ. Տաշչյանին:

Դատարանի դատավոր Մ. Տաշչյանի 29.08.2023 թվականի զեկուցագրի հիման վրա քաղաքացիական գործը դատավոր Ա. Մուշեղյանին է վերամակագրվել 2023 թվականի օգոստոսի 30-ին, իսկ դատավորի աշխատակազմին է հանձնվել 2023 թվականի օգոստոսի 31-ին:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն

մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ընդդատյա է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներին և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ, 125-րդ, 188-րդ, 199-200-րդ, 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԹՈՒՆԵԼ ՍԱԴ ԱՐԻԱՆԱ» ՓԲ ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքում Ջրվեժում ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքերի ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 4-րդ արձանագրությունով «ԹՈՒՆԵԼ ՍԱԴ ԱՐԻԱՆԱ» ՓԲ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականի հոկտեմբերի 17-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ**